ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ «ԿԱՎԿԱԶԻ» ՆԵՐԿԱՅԱՑՄԱՄԲ

Ս. Մ. ՍԱՀԱԿՅԱՆ

XIX դարի երկրորդ կեսին Անդրկովկասում երևան են գալիս նաև ռուսալեզու պարբերականներ, որոնցից առաջինը՝ ցարական կառավարության պաշտոնաթերթ «Կավկազը», սկսում է լույս տեսնել 1846 թվականից՝ Թիֆլիսում։ Քաղաքում, ինչպես հայտնի է, կար հոծ հայ բնակչություն, որի հետ կապված շատ խնդիրներ արտացոլվում էին այդ պարբերականի էջերում։

Կապիտալիզմի զարգացումը ոչ միայն փոխում է Հայաստանի բնակչության սոցիալական կազմը, այլև նպաստում բնակչության ակտիվ տեղաշարժերին՝ դեպի Անդրկովկասի երկու խոշոր կենտրոններ՝ Թիֆլիս ու Բաքու, ուր հայերը կարևոր գեր էին խաղում նրանց տնտեսական ու հասարակական կյանքում։ «Կավկազի» հաղորդմամբ 1866 թ. Թիֆլիսի նահանգում ապրում էր 106000 հայ։ Դրանցից 31000-ը ապրում էր Թիֆլիսում, այն պարագայում, երբ նույն 1866 թ. Թիֆլիսի 14 ազգության բնակիչների ընդհանուր թիվը 71000 էր[1]։ *Հաջորդ տասնամյակներին հայերի թիվը կրկին ավելանում և դարավերջին կազմում է Թիֆլիսի բնակչության 42%-ը (շուրջ 40000 մարդ)*[2]։ *Անշուշտ, թվային նմանօրինակ գերակշռությունը իր կնիքը պետք է դներ քաղաքային կյանքի բոլոր ոլորտների վրա։ Չկար մի այնպիսի բնագավառ, որտեղ հայերը գործուն մասնակցություն չունենային։ Այդ պատճառով էլ Թիֆլիսում հրատարակվող թերթը պատշաճ տեղ պիտի հատկացներ Թիֆլիսահայության կյանքին ու գործունեությանը։*

Պարբերականի էջերում տպագրված նյութերը պատկերում են Թիֆլիսի առօրյան, այստեղ ապրող տարբեր ազգությունների կենցաղն ու սովորույթները, Թիֆլիսի քաղաքային և հասարակական կյանքը։ «Կավկազի» հիմնական խնդիրներից մեկն էր «ճշտագույնս ներկայացնել» երկրամասը։ Պատմական ակնարկի ձևով թերթը տալիս է քաղաքի մոտ անցյալի պատկերը և այն փոխակերպումները, որոնք տեղի էին ունեցել վերջին տասնամյակներում։ Աղա Մահմեդ խանի արշավանքից մի քանի տարի անց, երբ Վրաստանը նոր էր միացել Ռուսաստանին, նրա մայրաքաղաք Թիֆլիսը տակավին կրում էր արշավանքի կնիքը։ Սակայն ընդամենը երկու տասնամյակ անց պատկերը միանգամայն փոխվում է։ Կովկասի կառավարչապետներ Ա. Երմոլովը, Ե. Գոլովինը և հատկապես գեներալ Մ. Վորոնցովը հսկայական գործ են կատարում քաղաքը եվրոպական ճարտարապետական ոճով վերակառուցելու, ներքին բարեկարգումներ կատարելու ուղղությամբ։ Բնակչության զվարճության և ժաման-

---

[1] Кавказ, 1866, №1, 73.

[2] *1879 թվականին Թիֆլիսում ապրում էր շուրջ 41 ազգություն և ըստ թվաքանակի, բնակչության կազմը հետևյալն է.*

1. հայեր՝ 37308 մարդ—41,6%

2. վրացիներ՝ 20390 մարդ—22,7%

3. ռուսներ՝ 19574 մարդ—21,8%» (Кавказ, 1879, № 102, 1893, № 138).

ցի նախկին սահմանափակ միջոցների՝ մուշտակովի, ջիրիդի փոխարեն ստեղծվում են հանգստի ու ժամանցի ժամանակակից օջախներ։ Մ. Վորոնցովը Թիֆլիսում հիմնում է տեղական մշտական թատրոն, որտեղ հյուրախաղերի են հրավիրվում տարբեր թատերախմբեր։ Միաժամանակ երկրամասում աշխուժանում է ազգային կյանքը, նոր թափ է առնում կրթական գործը, ստեղծվում են ազգային պարբերականներ։ Հետագայում, մասնավորապես XIX դ. 80—90-ական թվականներին, Թիֆլիսում նախապատրաստվում է հեռախոսային կապի և քաղաքը լուսավորելու գործը։ Վերջինիս հեղինակներն էին Դյուման ու Ջավախովը, իսկ ծրագրի իրականացմանն օժանդակում էր ինժեներ Մելիք-Ադամովը[3]։

Քաղաքային կյանքի հետագա բարելավման համար ստեղծվում է Թիֆլիսի տեխնիկական բյուրոն՝ ինժեներներ Էնֆիաջյանցի և Գրիգորյանի գլխավորությամբ։ Բյուրոն պետք է զբաղվեր քաղաքում կառուցվող հին և նոր շինությունների հատակագծերը կազմելու և նորոգելու, ջրմուղի, կամուրջների, ջրմաքրման ծորանների անցկացման գործերով[4]։ Հաշվարկների ու չափումների համար նրանք օգտագործում էին մեխանիկ Պետրոսյանի հեռաչափը[5]։

Թիֆլիսի հայ բնակիչները սիրում էին իրենց քաղաքը և անհրաժեշտ ու համարձակ քայլերի էին դիմում նրա բարեկեցության համար։ Այսպես. հայ ունևոր Նունուֆարովը Հավլաբարում սկսում է կոյուղի անցկացնելու աշխատանքները[6], Բ. Ալիխանովը դիմում է Թիֆլիսի քաղաքային վարչությանը, առաջարկելով կազմակերպել քաղաքի աղբի հավաքումն ու տեղափոխումը։ Նրման ձեռնարկում նա արդեն իրականացրել էր Բաքվում, որտեղ տեղադրել էր «12 հերմետիկ փակ տակառներ՝ աղբը հավաքելու համար»[7]։ Կորգանովը ներկայացնում է ջրմուղի կառուցման իր նախագիծը, որը կբավարարեր բնակչության պահանջները և մեծ եկամուտ կբերեր քաղաքին[8]։ Մտահոգվելով Մետեխի բանտում գտնվող հայ բանտարկյալների հոգևոր կյանքով, վաճառական Ն. Պրիդոնովը կարողանում է վերցնել բանտի լավագույն սենյակներից մեկը՝ տաղթարանի համար[9]։

«Կավկազը» ոչ միայն ծանոթացնում և նկարագրում է Թիֆլիսի համար այս կարևոր փոփոխությունները, այլև անդրադառնում է այնտեղ տեղի ունեցող հանդեսներին, զբոսանքներին, ազգային տոներին։ Պարբերականը մեծ գոհունակությամբ է ներկայացնում Թիֆլիսի դպրոցների տարեկան հաշվետու համերգները, ժողովրդական և կրոնական տոները («Զատիկ», «Կանաչ կիրակի», «Ավետիք»)։ Տոնախմբություններին մասնակցում էր Թիֆլիսի ամբողջ բնակչությունը։ Այդ օրերին «հայք, ռուսք, վիրք, պարսիկք, չերքեզք... և ծերք,

---

[3] Նույն տեղում, 1892, № 324, 1893, № 17, 43։

[4] Նույն տեղում, 1893, № 4, 46։

[5] Վերջինիս գյուտը մեծ արձագանք էր գտել «Մշակի» էջերում. «Այս գործիքը առանց որևէ դրավոր հաշվարկումների, միայն սլաքի ցուցմունքի օգնությամբ ճշգրտորեն հաշվարկում է ցանկացած տարածության հեռավորությունը». այն հաջողությամբ անցել էր փորձարկություններ, և նրա հեղինակը դիմել էր Թիֆլիսի նահանգապետին՝ հեղինակային իրավունք ձևոր բերելու խնդրանքով (նույն տեղում, 1892, № 102, 122)։

[6] Նույն տեղում, 1892, № 144։

[7] Նույն տեղում, 1893, № 170։

[8] Նույն տեղում, № 100։

[9] Նույն տեղում, № 224 (Թիֆլիսում կար հայ լուսավորչական քարաշեն 24 եկեղեցի ու տաճար և 2 վանք)։

և երիտիսարդք, իւրաքանչիւր ըստ զարդու և ըստ տարազու իւրոց հայրենեաց..., վերամրաոնան՝ի լեառն Սոլոլակ կամ՝ի Հալլապար»[10]:

Պարբերականի հրապարակումներից երևում է, որ քաղաքային իշխանությունները աջակցել են ազգային ծիսական տոների կատարմանը[11]:

Կազմելով Թիֆլիսի բնակչության հարաբերական մեծամասնությունը, թիֆլիսահայերը գործուն մասնակցություն ունեին քաղաքի հասարակա-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում: Նրանք ոչ միայն հայտնի արհեստավորներ ու վաճառականներ էին, այլև պետական մարմինների ծառայողներ ու պաշտոնյաներ, քաղաքային Դումայի անդամներ, հաճախ նաև՝ քաղաքագլուխներ: Վրաց աղնվականությունն ու մտավորականությունը երբեմն ցավագին էին ընդունում հայերի այսօրինակ առաջադիմությունը և պայքարի դուրս գային, ինչպես իրենք էին ասում, թիֆլիսահայերի դեմ, որոնք բոլորովին տարբեր ցեղից են և որոնց մեջ նրանք չէին «տեսնում իսկական հայ ցեղը»[12]: «Կավկազը», սակայն, գրեթե չի անդրադառնում XIX դ. երկրորդ կեսի հայ-վրացական փոխհարաբերություններին:

1864 թ. հունվարի 1-ին ցարական կառավարությունը որոշում ընդունեց Անդրկովկասում տեղական ինքնավարության վերաբերյալ: Սակայն այն չգործադրվեց մինչև 1870 թ. հունիսի 16-ը: Մինչ այդ երկրամասի կառավարումն իրականացվում էր համայնքային կարգերի հիման վրա: Ամեն մի համայնք և դաս ընտրում էր իր ներկայացուցչին: Ընտրելու իրավունք ունեին չորս դաս.

1) Տոհմիկ աղնվականներ, որոնք հիմնականում վրացիներ էին:

2) Աղնվական և ժառանգական պատվավոր քաղաքացիներ:

3) Երրորդ և չորրորդ դասերի մեջ մտնում էին մոքալաքներ-պատվավոր քաղաքացիներ, առևտրականներ ու արհեստավորներ:

Ամեն մի դաս իր կողմից ընտրում էր 25 ներկայացուցիչ[13]:

Սակայն 1866 թ. Թիֆլիսում տեղի ունեցան նոր կարգի ընտրություններ, որոնց արդյունքները, ինչպես գրում է «Մուրճը», մեծ գժգոհություն էին առաջացրել վրաց հասարակայնության մեջ: Նրանց թիվը քաղաքային վարչությունում շատ չնչին էր, իսկ երրորդ և չորրորդ դասերից ոչ մի վրացի չէր ընտրվել: «Կավկազը ոչ միայն հաստատում, այլև լրացնում է «Մուրճի տեղեկատվությունը: Պարբերականից տեղեկանում ենք, որ 1866 թ. քաղաքային վարչության կազմի մեծ մասը հայեր էին: Քաղաքագլուխ էր ընտրվել պաշտոնաթող գեներալ-մայոր Ե. Արծրունին, օգնականն էր պետական խորհրդական իշխան Մ. Բեհբութովը: Քաղաքի դատական իշխանությունը նույնպես գտնվում էր հայերի ձեռքում, քաղաքացիական դատավարությունը տնօրինում էր Ն. Զախարրեկովը, իսկ առևտրականը՝ Ն. Ամատունին[14]:

1874 թ. հոկտեմբերի 28-ին Անդրկովկասում քաղաքային ռեֆորմը օրենքի

---

10 Նույն տեղում, 1847, № 15:

11 1893 թ. հունվարին հայերը պատրաստվում էին նշել Սուրբ ծնունդը: Քաղաքային իշխանությունները նրանց օգնելու նպատակով հանձնարարել էին «Քաղաքային ինժեներ էնֆիաջյանցին ժամանակավոր կամուրջ կառուցել Քուռ գետի վրա: Միաժամանակ, ոստիկանությունը ոչ միայն պետք է ազատեր փողոցները, այլև ապահովեր ամբողջ անխափան երթը» (Նույն տեղում, 1893. № 1):

12 Մուրճ, 1902, № 11, էջ 86:

13 Նույն տեղում, էջ 84:

14 Кавказ. 1866. № 99.

քի ուժ ստացավ։ Ըստ այդմ Թիֆլիսում, Բաքվում և Երևանում ընտրվում էր քաղաքային ինքնավարություն՝ քաղաքային Դումա, որի պարտականությունն էր հոգ տանել քաղաքի բարեկարգման, նրա տնտեսության, հասարակական կարգի, բնակչության նյութական մատակարարման, առողջապահության, լուսավորության, առևտրի ու արդյունաբերության զարգացման, քաղաքային տուրքերի գանձման և այլ հարցերի մասին։

Քաղաքային Դուման ընտրվում էր չորս տարին մեկ անգամ, գույքային ցենզի հիման վրա։ Այն ուներ իր վարչությունը, որի նախագահը քաղաքագլուխն էր (վարչության նախագահն ուներ երկու օգնական, իր զրասենյակը և ենթակա պաշտոնյաներ)։ Նոր կանոնադրության համաձայն, ընտրությունների պետք է մասնակցեր երեք կարգ և ամեն մեկը իրավունք ուներ ընտրելու 24 ձայնավոր։ Սակայն նոր ընտրությունները Թիֆլիսում ոչինչ չփոխեցին։ Առաջին կարգում ընտրվեց 3 վրացի, երկրորդում՝ 2, երրորդում՝ 2։ Քաղաքագլխի համար առաջադրվել էին Թումանովի, Խանջիևի և Մամացովի թեկնածությունները։ Ընտրվեց Թումանովը[15]։ Հատկանշականն այն է, որ մինչև ընտրությունները վրաց մտավորականությունը քարոզում էր ընտրություն կատարել՝ ելնելով ոչ թե ազգային պատկանելությունից, այլ հետևելով այն սկզբունքին, թե ինչ կարող է անել ընտրվողը քաղաքի բարեկեցության համար։ Հայազգի գործչի ընտրվելը փոխեց խնդրի վերաբերյալ ունեցած վերաբերմունքը։ Սա առաջին բացասական դրվագն էր, որը պետք է ունենար իր շարունակությունը ոչ միայն Թիֆլիսի քաղաքային ինքնավարության, այլև քաղքենիական դասի ավագանու ընտրությունների, ապա Վրաստանի հայաբնակ գյուղերի հետ կապված հարցերում։

1883-ին տեղի ունեցան քաղաքային նոր ընտրություններ, բայց, ինչպես նախորդ անգամները, վրացիները փոքրամասնություն կազմեցին։ Ընտրվել էր 9 վրացի, 8 այլազգի, մնացածը հայեր էին։ Քաղաքագլուխը նույնպես հայ էր։ Կրկին ընտրվել էր Թումանովը[16]։ Այս անգամ վրաց մտավորականները, հանձինս Ս. Մեսխիի, Գ. Ակակիի, Գ. Ծերեթելիի, առաջ քաշեցին հետևյալ կարգախոսը. «Ուղիղ է, վրացիները Վրաստանի մայրաքաղաքում թվով քիչ են, և հայերը կամաց-կամաց մեր բերանից խլում են մեր պատառը», բայց եթե Թիֆլիսաբնակ «վրացի, ռուս և ուրիշ ազգի մարդկանց գումարենք, հայերից եթե ոչ շատ, պակաս էլ չի լինի»[17]։

«Կավկազ» պարբերականը նույնպես կարծում է, որ հայերի թվային գերակշռությունը Դումայում անընդունելի է փոքրամասնությունների՝ տվյալ դեպքում վրացիների համար։ Հաստատելով հայերի ոչ միայն թվային, այլև տնտեսական, հասարակական-քաղաքական առավելության հանգամանքը, «Կավկազը» միաժամանակ գտնում է, որ եթե Դումայի ղեկավար հայությունը «քաղաքականապես զարգացած մարդիկ» լինեին, ապա նրանք կհասկանային, որ «ցանկացած ուժի լավագույն հատկանիշն է արդարությունը, որը կայանում է

[15] Նույն տեղում, 1874, № 150։

[16] Նույն տեղում, 1883, № 205։ 1893 թ. քաղաքային ընտրությունների ժամանակ քաղաքագլուխը փոխվեց։ Քաղաքագլխի պաշտոնակատար Պ. Իզմայլովին փոխարինեց Ռ. Ֆոն մշեր (տե՛ս նույն տեղում, № 248)։

[17] Մուրճ, 1902, № 11, էջ 86։

ավյալ դեպքում փոքրամասնությունների շահերը և պատմական իրավունքները հարգելու մեջ»[18]:

Հարավերջին քաղաքային ընտրությունների արդյունքների դեմ հանդես է գալիս նաև «Արձագանքը»[19]: Խոսելով այն մասին, որ վերջին քաղաքային ընտրությունները չեն կարող գոհացնել ոչ միայն այլազգի բնակիչներին, այլև հայերին, պարբերականը դրա պատճառները փնտրում է հայ և վրաց ժողովուրդների մտավորականության պասիվության մեջ, որից օգտվում են կեղծ մտավորականները՝ «գիպլոմավորված և չդիպլոմավորված քաղաքական ոչնչությունը», բնակչության ցածր մակարդակը օգտագործելով իրենց «ծրագրերի» իրականացման համար։ Շարունակելով իր միտքը, «Արձագանքը» ավելացնում է, որ բաղմադդ Թիֆլիսում հայերի շահերը պահանջում են քաղաքի հոգսերն ու հաղթանակները բաժանել վրացիների և ռուսների հետ։ Իսկ որպեսզի այդ համագործակցությունը կայանա, «հեռատես մարդիկ պետք է օգտագործեն ամեն մի հնարավորություն՝ համատեղ գործունեության շրջանակները ընդլայնելու համար», և ոչ թե վերածվեն էթնիկական ընդդիմության[20]:

«Կավկազը» հաղորդում է, որ 1893-ի ընտրությունների արդյունքում ևս թե՛ նահանգի ազնվականական խորհրդի և թե՛ ավագանու նախագահի պաշտոնում դարձյալ հայեր էին ընտրվել։ Առաջինը իշխան Բեհբութովն էր, երկրորդը՝ Աբրամովը, որը փոխարինեց Բուգդանովին[21]:

Վախենալով տեղական բնակչության ակտիվացումից, որը պայմանավորված էր նաև ազգային-ազատագրական ու մարքսիստական խմբակների գործունեությամբ, 1892 թ. հրատարակվեց քաղաքային ինքնավարության նոր կանոնադրությունը։ Այն ոչ միայն սահմանափակում էր Դումայի իրավունքներն ու գործունեության շրջանակները, այլև կրճատում անդամների՝ «ձայնավորների» թիվը[22]:

Վրաց գործիչները դժգոհում էին նաև «Փոխադարձ վարկի» բանկից, ավաղների խորհրդից, ազնվականական ժողովից։ Պատճառը պարզ էր. հայերը կրկին մեծամասնություն էին կազմում։ «Փոխադարձ վարկի» կառավարիչն էր Ադելխանովը, ավագների խորհրդի նախագահը՝ Ս. Արծրունին, ազնվականական ժողովինը՝ Արասխանյանցը[23]: Վրաց գործիչները պնդում էին, որ «Փոխադարձ վարկի» բանկը, բացի հայերից, մերժում է մյուս այլազգի ժողովուրդների անդամակցությունը։ Նման «մեղադրանքները» ոչ մի լուրջ հող չունեին։ Ժամանակի անկախ և լիբերալ պարբերական «Նովոյե օբոզրենիեն» բարձր է դնահատել «Փոխադարձ վարկի» բանկի դերը և ափսոսանքով է արձանագրում նրա փակվելու փաստը[24]:

---

[18] Кавказ, 1893, №132.

[19] Նկատի ունենք 1893 թվականի ընտրությունները, որոնց արդյունքները անվավեր էին ճանաչվել, և նույն 1893 թվականին նոր ընտրություններ էին անցկացվել (տե՛ս նույն տեղում, № 117, 129, 136, 141, 153)։

[20] Արձագանք, 1893, Кавказ, 1893. № 132.

[21] Кавказ, 1892. №152. 1893, №92.

[22] «Կավկազը» այն համոզմունքին էր, որ չնայած քաղաքային ինքնավարությունը որոշ չափով սահմանափակվում է, այնուամենայնիվ, նոր կանոնադրությունը ավելի լիբերալ է։ «Ճիշտ է, օրենսդիրը ավելի է ընդլայնել գույքային ցենզի պահանջները, բայց փոխարենը այժմ բոլոր ընտրողները ունեն հավասար իրավունքներ» (նույն տեղում, 1893, № 8, 104)։

[23] Նույն տեղում, 1892, № 86, 183, 1893, № 42, 99։

[24] Новое обозрение, 1884.

Շուտով վրաց մտավորականությունը անցնում է հայերեն լեզվի գործածության ոլորտի հարցին, որը սերտորեն առնչվում էր հայաբնակ գյուղերի խնդրի հետ (խոսքը Ախալքալաքի, Դուշեթի, Գորիի շրջանների մասին է)։ Հենվելով «Կավկազում» տպագրված հաղորդագրությունների վրա, «Դրոեբան» դրում է. «Հայոց ուսումնարաններում վրացերեն չեն սովորեցնում, թեպետ երեխաների համար այն մայրենի լեզու է, և այն վրացական սիրտ ոլիտի դնի հայերի մեջ»[25]։

Վրացական միջավայրում հայկական որոշ գյուղեր վրացախոս էին դարձել, սակայն լուսավորական շարժումը, որի հետևանքով բացվեցին ու սկսեցին գործել բազմաթիվ հայկական դպրոցներ, նպաստեց հայ երիտասարդների հոսքին՝ դեպի ազգային դպրոցը։ Հայոց եկեղեցին և հայ առաջադեմ մտավորականությունը հասկանում էր, որ նոր ազգային դպրոցը հայության միակ պահպանիչ և կրթող օջախն է։

Հայ-վրացական քննարկումների ևս մի ոլորտ կապված էր Թիֆլիսում համալսարան բացելու խնդրի հետ։ XIX դ. 80-ական թվականներին Թիֆլիսի ողջ հասարակայնությունը հուսով սպասում էր համալսարանի բացմանը։ Թիֆլիսի բնակիչներից մեկը՝ Հարությունը Գրիգորյանը, իր որդիներին պատվիրել էր տասը տարի անընդմեջ հետ գցել 500-ական ռուբլի և նվիրաբերել համալսարանին, եթե այն բացվի Թիֆլիսում[26]։ Իսկ «Մշակի» խմբագիր Գր. Արծրունին[27] դիմել էր ռուսաց կառավարությանը՝ հետևյալ առաջարկությամբ. «Ռուսաստանի ազդեցությունը հայերի վրա է՛լ ավելի ուժեղացնելու նպատակով հարկավոր է Թիֆլիսում բացել համալսարան, որտեղ դասավանդումը կատարվի ռուսերեն և հայերեն լեզուներով»[28]։ Նոր ժամանակներում համալսարան բացելու ջատագովներն էին պրոֆ. Նիկոզայոս Մառն ու Հովհաննես Թումանյանը։

Քաղաքային ռեֆորմին զուգընթաց, Անդրկովկասում անցկացվեց նաև դատական ռեֆորմ (1864 թ. նոյեմբերի 20)։ Սա թերևս ամենից առաջ բուրժուական ռեֆորմ էր։ Հին դատական համակարգը, որի հիմքում ընկած էր դասային պատկանելության սկզբունքը, վաղուց սպառել էր իրեն։ Նոր օրենքով դասային դատարանի փոխարեն մտցվում էր բոլոր քաղաքացիների համար ընդհանուր դատավարություն։ Անկախ դասային պատկանելությունից, մեղադրյալները պետք է դատվեին միևնույն դատարանում, միևնույն օրենքով, բաց դատավարությամբ։

1864 թ. նոյեմբերի 20-ի կանոնադրությամբ դատավորներն ու երդվյալ հավատարմատարներն ընտրվում էին։ Դրա համար պահանջվում էր բավականաչափ բարձր գույքային ցենզ կամ եկամտի աղբյուր և համապատասխան գրագիտություն։ Դատարանը օրենքով անկախ էր։ Դատարանի նախագահին, հաշտարար դատավորներին ու երդվյալ հավատարմատարներին վարչական կարգով աղատել չէր կարելի։ Մեծ մասամբ հաշտարար դատավորներ նշանակվում էին ռուս չինովնիկները, որոնք աշխատում էին թարգմանիչների օգնու-

[25] Մուրճ, 1902, № 11, էջ 91, Կավկազ, 1870, № 14, Новое обозрение, 1884, № 69.

[26] Кавказ, 1870, №54.

[27] Գրիգոր Արծրունու ռուսական կողմնորոշումը ռուսասիրությամբ ողնկոչված գաղափարական պոռթկում չէր, այլ ազգի հավարական գիտակցությամբ հասունացած դիրքորոշման դրսևորում։ Արծրունին ռուս մշակույթի և հասարակական մտքի եռանդուն քարոզիչն էր։

[28] Մուրճ, 1902, № 92։

բամբ։ Սակայն կային նաև տեղացի դատավորներ։ Հայտնի է, որ երկար տարիներ Թիֆլիսի նահանգային դատարանը գլխավորում էր իսկական պետական խորհրդական Ս. Համբարովը[29]:

Քաղաքական և փոքրիշատե նյութական ապահովություն ձեռք բերած Թիֆլիսը, սակայն, երաշխավորված չէր համաճարակներից, որոնք մեծ հոգս էին պատճառում տեղի բազմազգ ժողովրդին։ Դրանցից էին՝ 1846—1847 և 1892—1893 թթ. խոլերայի, 1883—1884 թթ. ծաղկախտի համաճարակները։

Առաջին համաճարակը անհամեմատ հեշտ հաղթահարվեց։ 1847 թ. վերջին Անդրկովկասում այլևս խոլերայի կենտրոններ չկային։ «Կավկազը» մի շարք հոդվածներով պատմում է ձեռնարկած կանխարգելիչ միջոցների՝ հիվանդանոցների բացման, կենսամթերքների ու հացի որակի բարելավման մասին։ Քաղաքացիներին գանազան խորհուրդներ էին տրվում. խուսափել խակ պտուղներ ուտելուց, չխմել գետի պղտոր ջուրը, աշխատել հնարավորին չափ մաքրություն պահպանել։ Հետաքրքրականն այն է, որ 1846—1847 թթ. համաճարակի ժամանակ, պայքարն «արդյունավետ» դարձնելու նպատակով, էջմիածնից բերվում են սուրբ մասունքներ և, ինչպես հավաստում է «Կավկազը», խոլերան աստիճանաբար անհետանում է։

1883—1884 թթ. երկրամասում նոր աղետ սկսվեց՝ ծաղկախտի համաճարակը, որը տարածվել էր նաև ընտանի կենդանիների մեջ։ Համաճարակի վրտանդավոր կենտրոններ էին դարձել Թիֆլիսի Հավլաբար և Զուղուրեթի թաղամասերը, Օրդուբադը, Սղնախը։ Այս առիթով հայկական պարբերականները՝ «Մշակն» ու «Նոր-Դարը» ցավալի իրողություն են նկարագրում։ Պատկերելով Օրդուբադի և Սղնախի վիճակը այդ օրերին, նրանք գրում են. «Ամենացավալին այն է, որ բժիշկներ չկան, որպեսզի կանխեն աղետը, իսկ բնակչությունը չգիտի՝ ինչպես վարվի»[30]: Անդրադառնալով Թիֆլիսում տիրող իրավիճակին, մեկ այլ պարբերական՝ «Նովոյե օբոզրենիեն», նշում է, Թիֆլիսում ստեղծվել է ծաղկախտի դեմ պայքարի կոմիտե, որը ոչ միայն հաշվառել է հիվանդներին, այլև կազմել միջոցառումների՝ «Անհրաժեշտ պատվաստումներ կատարելու, ախտահանիչ կայաններ բացելու, գումարներ տրամադրելու»[31], հատուկ ծրագիր։ Իսկ «Սանկտ-Պետերբուրգսկիե վեդոմոստին» ավելացնում է. «Հավաստի աղբյուրներից լսել ենք, որ մոտ օրերս Պետերբուրգից ծաղկախտով վարակված շրջանները որպես լիիրավ կառավարիչ մեկնելու է գեներալ-ադյուտանտ կոմս Միխայիլ Տարիելի Լորիս-Մելիքովը։ Կոմսը իրավունք ունի այրելու վարակված տները, վճարելով փոխհատուցում 1000 ռուբլու չափով։ Կոմս Լորիս-Մելիքովը բանիմաց, զուսպ անձնավորություն է, որը միշտ պատրաստ է լսելու խելացի առաջարկները»[32]:

Դեռ նոր էր Թիֆլիսը ուշքի եկել ծաղկախտի աղետից, երբ 1891—1893 թթ. վերսկսվեց խոլերայի համաճարակը։ Ի տարբերություն նախորդի, այս նոր աղետը շատ ավելի ուժգին էր։ Համաճարակն այնքան ուժեղ էր, որ մի շարք քաղաքներում՝ Տրապիզոնում, Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում դպրոցները փակվեցին[33]:

---

[29] Кавказ, 1893, №85.

[30] Новое обозрение, 1884, №30, 49.

[31] Նույն տեղում, № 23, 30, 34։

[32] Санкт-Петербургские ведомости, 1879, №22.

[33] Кавказ, 1892, №193, 284, 298; 1893,, №135.

Աղետի առաջին իսկ օրվանից Թիֆլիսի քաղաքային Դուման ակտիվ միջոցառումների ծրագիր է մշակում, չմոռանալով ներգրավել նաև բարեգործական ընկերություններն ու անհատ բարեգործներին։

Համաճարակի դեմ արդյունավետ պայքարելու նպատակով գործի է դրվում նաև մամուլը։ Հետևելով «Կավկազին», «Տարազը», «Մշակը», «Նոր-Դարը» լայնորեն լուսաբանում են խնդիրը։ Նրանք տեղեկություններ են հաղորդում խոլերայի ընթացքի, բժշկական ջոկատների գործունեության մասին, հիմնավորում են բարեգործության անհրաժեշտությունը։ Այս առիթով «Տարազը» գրում է. «Գաղտնիք չէ, որ Բաքվի մեծահարուստները, աննշան բացառությամբ, Ղարաբաղից են։ 30—40 տարում նրանք կարողացան Բաքվում կուտակել հրկիզյական հարստություններ, ստեղծեցին ներկայիս Բաքուն։ Այժմ նրանց վրա դրված է սուրբ պարտականություն՝ օգնության ձեռք մեկնեն։»[34]: Այս միտքը պաշտպանում է և «Կավկազ» թերթը[35]:

Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը անմիջապես հրավիրում է ընդհանուր ժողով, որտեղ համաճարակի դեմ պայքարելու համար տրամադրվում է 6.200 ռուբլի գումար։ Շուտով Թիֆլիսի ազնվականական բանակը աղետը հաղթահարելու համար տրամադրում է 12.000 ռուբլի գումար[36]: Քաղաքային վարչությունները նույնպես գումարներ էին հատկացնում, որոնք պետք է օժանդակեին բժշկական ջոկատներ հրավիրելու, նրանց գործունեությունը սատարելու գործին։ «Կավկազը» բազմաթիվ նման հաղորդումներ է տպագրում։ Դրանցից մեկում կարդում ենք. «Ալեքսանդրապոլ քաղաքը խոլերայի համաճարակի դեմ պայքարելու նպատակով հրավիրում է երկու բժիշկ՝ 325 ռուբլի ամսական վարձով և 6 բուժակների՝ 50-ական ռուբլի ամսեվարձով»[37]։ Մեկ այլ համարում տպագրված է Երևանի նահանգապետի հրավերը, որը բովանդակում է ոչ միայն աշխատավարձի չափը, այլև ճանապարհածախսը. «Երևան քաղաքը խոլերայի դեմ պայքարելու նպատակով հրավիրում է բժիշկների՝ 300 ռուբլի ամսեվարձով և բուժակների՝ 60 ռուբլի ամսեվարձով»[38]: Ծանր վիճակ էր ստեղծվել նաև Կարսում, ուստի ժամանած սանիտարական ջոկատը ամբողջությամբ պետք է ախտահաներ տարածքը, ապա անցներ Նախիջևան ու Նոր-Բայազետ[39]:

Աղետների հաճախակի կրկնումը սկսում է մտահոգել երկրամասի բժշկական անձնակազմին, որն էլ Կայսերական կովկասյան բժշկական ընկերության միջոցով գիմում է ներքին գործերի նախարարին՝ 1893 թ. Թիֆլիսում բժիշկների համագումար անցկացնելու խնդրանքով։ Համագումարը բացվում է 1893 թ. փետրվարի 21-ին «Երաժշտական խմբակի» սրահում՝ Լ. Շլյախտինի նախագահությամբ։ Համագումարի ընթացքում լայնորեն քննարկվեցին խոլերայի դեմ պայքարի երկու նորարարություն։ Առաջինի մասին դեռևս 1892 թ. գրել էր «Մշակը». գա կապիտան Ստրադովսկու հակախոլերային միջոցն էր[40]:

---

34 Նույն տեղում, 1892, № 183։

35 Նույն տեղում։

36 Նույն տեղում, № 189, 199, 219, 228։

37 Նույն տեղում, № 199։

38 Նույն տեղում. № 201, 220։

39 Նույն տեղում, № 261։

40 95% սպիրտին նա խառնել էր մատնունու թուրմը։ Այս եղանակով առողջացել է ոչ միայն ինքը, այլև 400 մարդ (Նույն տեղում, № 216)։

Երկրորդ նորարարությունը բժշկական գիտությունների դոկտոր ղզլարցի Տեր-Գրիգորյանցի նոր ախտահանիչ մեքենան էր, որն արդեն անցել էր առաջին փորձարկումը։ «Տարազի» և «Մշակի» վկայությամբ, սա հենց այն բժիշկ Տեր-Գրիգորյանցն էր, որի «Խոլերան և նրա դեմ պայքարի միջոցները» հայերեն լեզվով գրքույկը, մոտ 5000 օրինակ, անվճար նախաձեռնել էին տպագրել Շուշի քաղաքի մի խումբ երիտասարդներ[41]:

Համագումարը, միաժամանակ բարձր գնահատելով բժշկական անձնակազմի անձնազոհ աշխատանքը, մի քանիսին ներկայացրեց պարգևատրման։ Դրանց թվում էին Ռեշտ (Պարսկաստան) գործուղված Թիֆլիսի Միխայլովսկայա հիվանդանոցի պրոռեկտոր, բժիշկ Հ. Զ. Լորիս-Մելիքովը և ֆելդշեր Պավլովը։ Նրանք, ինչպես նաև Թիֆլիսի առևտրական դեպուտացիայի նախագահ Ալեքսանդր Ակոպովը պարգևատրվեցին «Առյուծի 3-րդ աստիճանի և Արևի 5-րդ աստիճանի շքանշաններով»[42]:

1892—1893 թթ. խոլերային համաճարակի ժամանակ հայ հոգևորականությունը նույնպես մասնակցեց ադետի հաղթահարման գործին։ Բայց նրա մասնակցությունը «մխիթարանքի տեսք ուներ», ինչը «Մշակի» խմբագիր Արծրունու կարծիքով բավարար չէ. «Իսկ որտեղ է Քրիստոսի ուսմունքը, որը քարոզում էր սեր, եղբայրություն, համերաշխություն, փոխօգնություն։ Հոգևորականությունը պետք է նյութական միջոցներ հավաքի և դրանով օգնի ժողովրդին»[43]: Նման հարցադրումը կապված էր 1892-ի հունվարի 6-ի չարաբաստիկ իրադարձության հետ, երբ Թիֆլիսում բռնկված հրդեհի պատճառով բազմաթիվ ընտանիքներ կորցրեցին ամեն ինչ։ Հայկական բարեգործական ընկերությունը բժիշկ Բ. Նավասարդյանի գլխավորությամբ, ինչպես նաև Թիֆլիսի բարեգործական ընկերությունը , ոչ միայն անհապաղ գումարներ հատկացրին, այլև այդ նպատակով համերգներ կազմակերպվեցին, և այդ գումարը, շուրջ 2.500 ռուբ., նույնպես տրամադրվեց տուժածներին[44]:

Վերը նշված իրադարձությունները քաղաքային իշխանություններին բերեցին այն համոզման, որ քաղաքային վարչությանը կից պետք է ստեղծել մի բարեգործական ֆոնդ՝ քաղաքապետի գլխավորությամբ, իսկ գումարները սանիտարական ջոկատների միջոցով պետք է բաշխվեին կարիքավոր ընտանիքների միջև։ Սակայն աշխատավոր դասակարգը, որը համաճարակների տարածման առաջին օղակներից էր, իր տգիտության պատճառով շարունակում էր ապավինել աստվածային զորությանը։ Այդ պատճառով էլ կազմակերպվում է «եկեղեցական թափոր»։ Երթը կատարվեց 1892 թ. հուլիսի 12-ին։ Այն գլխավորում էր Ախալցխայի առաջնորդ Հովհաննես ծ. վարդապետ Շիրակունին։ Ս. Հակոբի մասունքներով երթը՝ Կրծանիսից շարժվում է Թիֆլիսի Վանքի մայր տաճար[45]: Մատուցվեցին նաև պատարագներ։ Սակայն ամենանշանակալիցն այն էր, որ հայ հոգևորականությունը լսեց մեծ հրապարակախոսի՝ Արծրունու ձայնը և ավելի գործուն մասնակցություն ցուցաբերեց խոլերայի դեմ պայքարում։ Կաթողիկոսական տեղապահ եպիսկոպոս Երեմիայի առաջարկությամբ

---

41 Նույն տեղում, № 165, 1893, № 51։

42 Նույն տեղում, 1892, № 11, 1893, № 20։

43 Նույն տեղում, 1892, № 190։

44 Նույն տեղում, № 11, 12, 184։

45 Նույն տեղում, № 78, 173։

եպիսկոպոս Արիստակես Սեդրակյանը դրամական և դեղորայքային օգնությամբ մեկնում է Երևանի նահանգի՝ խոլերայով վարակված գյուղերը՝ օգնություն անվճար բաժանելու և սանիտարական ջոկատներին աջակցելու համար[46]:

1880—1890-ական թվականների համաճարակային աղետների դեմ պայքարի ընթացքում կիրառվեց նաև բարեգործության նոր միջոց՝ անվճար թեյարանների ու ճաշարանների հիմնումը: Դրանք բացվեցին ոչ միայն քաղաքային Դումայի, այլև անհատ բարեգործների կողմից: «Կավկազը» բազմաթիվ տեղեկություններ է հաղորդում նրանց մասին: Պարբերականից տեղեկանում ենք, որ անվճար թեյարաններ էին բացվել քաղաքի բոլոր մասերում, և հատկապես այն թաղամասերում, ուր աշխատավոր դասակարգը մեծամասնություն էր կազմում: Դրանց թվին էին պատկանում Տեր-Ասատուրովի ու Ակոպովի թեյարանը՝ Միխայլովսկի կամուրջի մոտ, Սուքիասովի թեյարանը՝ Վորոնցով փողոցի վրա, Մարիա Ծովյանովայի հիսուն տեղանոց ճաշարանը, Հավլաբարում բացված թեյարաններն ու ճաշարանները[47]:

1892 թ. վերջին անվճար թեյարաններն ու ճաշարանները փակվեցին: Քաղաքապետին տրված զեկուցագրում 7-րդ սանիտարական ջոկատի նախագահ Մելիք-Ալավերդովը նշում է դրանց գործունեության նշանակությունը. «Նրանք, բացի իրենց անմիջական նշանակությունից, որպես հետևանք ունեցան այն, որ բնակչությունը սկսեց վստահել խոլերայի դեմ պայքարի՝ քաղաքի կողմից կազմակերպված միջոցառումներին»[48]:

Ինչպես տեսնում ենք, Թիֆլիսը ոչ միայն զոհեր էր տալիս համաճարակներին, այլև տոկում էր, դիմագրում: Բնակիչներն անվարձահատույց իրենց քաղաքացիական պարտքն էին կատարում:

Հայ հասարակական միտքն առաջընթաց էր ապրում: Մտավորականներից շատերը առաջ էին քաշում եվրոպական լուսավորության, քաղաքակրթության և գիտական նվաճումների ընգծրինակման անհրաժեշտությունը: Եվ ինչպես նշում է Բաֆֆին. «Ազգերի կյանքում լինում են այնպիսի դարաշրջաններ, երբ համարյա ամբողջ ժողովրդի ուշադրությունը, ձգտումները լարված են լինում դեպի մի նպատակ: Հարուստն իր արծաթը, աղքատն իր աշխատանքը, զինանականն իր հմտությունները գործ են գնում նույն նպատակի իրագործվելուն: Մեկի արածը մյուսի համար օրինակ է դառնում, և գործը ընդհանրանում է»[49]:

Պաշտոնական օրդան լինելով հանդերձ, իր գոյության առաջին կեսին «Կավկազը» հիմնականում անաչառ էր հրապարակվող փաստերի և երևույթների նկատմամբ: Ցմոռանալով իր կարևոր առաքելության մասին, շատ գեպքերում հենվելով հենց հայ պարբերականների վրա, թերթն աշխատում էր մեղմացնել ազգամիջյան անախորժ երևույթները: «Կավկազը» հարուստ նյութ է մատակարարում XIX դ. երկրորդ կեսին պատմության խնդիրներով զբաղվող հետազոտողներին:

---

[46] Նույն տեղում, № 230:

[47] Նույն տեղում, № 184, 198, 1983, № 109, 204:

[48] Նույն տեղում, 1892, № 314:

[49] Բաֆֆի, Երկ, հ. 11, Ե., 1991, էջ 480—485:

ТИФЛИССКИЕ АРМЯНЕ ПО ПРЕДСТАВЛЕНИЮ «КАВКАЗА»

С. М. СААКЯН

Резюме

С 1846 г. в Тифлисе издается официальный орган царского правительства—газета «Кавказ». Изначально ей было предопределено стать путеводителем окончательного экономического подъема края.

По материалам газеты, в середине и во второй половине XIX века в Тифлисе проживало значительное число армян. Их общественная, экономическая и культурная жизнь широко освещена на страницах «Кавказа». Опираясь на материалы собственных корреспондентов, а также ссылаясь на армянские периодические издания, газета раскрывает целостную хронику жизнедеятельности армянской общины города. На страницах газеты обсуждаются некоторые вопросы армяно-грузинских отношений.

Газета «Кавказ» является важным первоисточником по изучению истории армянского народа второй половины XIX века.